

ՀԱՅԵՆ ՈՒ ԳԻՆԻՆ

Որսը, խնջույժն ու սննդային կոդերը
«Մասնա ծոեր» էպոսում և
հայ միջնադարյան գրականության մեջ



ՀՎՅԿ ՀՎՄԲՎԲԶՈՒՄՅՍՆ



Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական
հիմնադրամը երախտագիտություն են հայտնում
«ԱՌԱՏԱՇԵՆ ՎԱՅՆԵՐԻ» ընկերությանը,
ի դեմս տնօրեն Վահան Եղոյանի,
սույն գրքի տպագրությունը հովանավորելու համար:

Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts and
“Friends of the Matenadaran” Benevolent Fund
express their gratitude to company
«ARATASHEN VINERY» and to director Vahan Eghoyan
for sponsoring the publication of this book.



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

HAYK HAMBARDZUMYAN

**BREAD AND WINE:
HUNTING, FEAST AND CULINARY CODES IN THE
EPIC “DAREDEVILS OF SASSOUN” AND IN
MEDIEVAL ARMENIAN LITERATURE**

YEREVAN 2024

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА
МАШТОЦА

ԱՅԿ ԱՄԲԱՐՇՄՅԱՆ

**ХЛЕБ И ВИНО:
ОХОТА, ПИР И КУЛИНАРНЫЕ КОДЫ В ЭПОСЕ
“САСНА ЦЕР” (“ДАВИД САСУНСКИЙ”) И
В АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ЛИТЕРАТУРЕ**

ЕРЕВАН 2024

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿ ՀԱՐԲԱՐՉՈՒՄՅԱՆ

ՀԱՅՆ ՈՒ ԳԻՆԻՆ.
ՈՐՍԸ ԽՆՉՈՒՅՔԻՆ ՈՒ ՄՆՆԴԱՅԻՆ ԿՈՂԵՐԸ
«ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ»
ԷՊՈՍՈՒՄ ԵՎ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ 821.19.0

ԳՄԴ 83.3(5Հ)

Հ 205

Հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Գոհար Մուրադյան
բանասիրական գիտությունների դոկտոր

Գրքի սննդային կողերին և հերոսների ճաշացանկին
նվիրված հատվածի ուսումնասիրությունը կատարվել է
ՀՀ ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհով:

Համբարձումյան Հայկ

Հ 205 Հացն ու Գինին. որսը, խնջույքն ու սննդային
կողերը «Սասնա ծռեր» էպոսում և հայ միջնադարյան
գրականության մեջ / Հ. Համբարձումյան.- Եր.:
Մատենադարան, 2024.- 224 էջ:

Մենագրության մեջ հայ միջնադարյան գրականության և
«Սասնա ծռեր» դյուցազներգության համեմատական քննու-
թյամբ ներկայացվում են էպիկական ու գրական հերոսների
սննդի հայթայթման ձևերը և հատկապես որսորդությունը,
սննդային նախապատվությունները, հիշատակվող կերակրա-
տեսակների օգտագործման կերպն ու ժամանակը: Անդրա-
դարձ է կատարվում կերակրատեսակների ու սննդային կողերի
կենցաղային, ծիսական ու գեղարվեստական նշանակությանն
ու գործառույթներին:

ՀՏԴ 821.19.0

ԳՄԴ

83.3(5Հ)

ISBN 978-9939-897-26-4

DOI:10.57155/XIST9401

© ՀԱՄԱԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՀԱՅԿ, 2024

© ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻԲՐԵՎ ՄԿԻՉԲ 9

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

**ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ԵՎ ԷԴՈՍՈՒՄ** 21

Ա. Որսը՝ սննդի հայթայթման միջոց,
ազնվական կենցաղի բաղադրիչ ու
գեղարվեստական մոտիվ 23

Բ. Թաքցված որսատեղի. որսատեղին՝
թագավորական իշխանության խորհրդանիշ 32

Գ. Որսատեղին և հոգևոր ինքնության
վերածննդի խորհրդանիշը 37

Դ. Որսատեղին՝ սպանության ու
պատուհասման վայր 45

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

**ԻՆՉ ԵՆ ՈՒՏՈՒՄ ԵՎ ԽՄՈՒՄ
ԴՅՈՒՑԱԶՈՒՆՆԵՐԸ. ՀԵՐՈՍՆԵՐԻ ՃԱՇԱՑԱՆԿԸ** 55

Ա. Մննդային կամ խոհարարական կողեր 57

Բ. Ի՞նչ են ուտում դյուցազունները և
ազնվականները 69

Գ. Հաց հանապազորդ 72

Դ. Ցասման ժամի հարիսա 82

Ե. Մսային ուտեստներ. դավուրմա և փլավներ 88

Զ. Բուսական կերակուրներ 96

Է. Կաթնեղեն և այլ ուտեստներ 99

Ը. Մեղր ու կարագ 101

Թ. Աղանդեր 107

Ժ. Ի՞նչ են խմում հերոսները.
գինի ու այլ խմիչքներ 111

ՄԱՍ ԵՐՐՈՐԳ

ԵՐԲ, ԻՆՉՈ՞Ւ, ԵՎ ՈՐՔԱ՞Ն ԵՆ ՈՒՏՈՒՄ
«ՍԱՄՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ ՈՒ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՍՆՈՒՆԴՆ ՈՒ ԾԵՍԸ **119**

Ա. Ե՞րբ են ուտում և խմում հերոսները.
խնջույքն ու հացկերույթները **121**

Բ. Որքա՞ն են ուտում հերոսները **134**

Գ. Ինչո՞ւ և ի՞նչ հանգամանքներում են ուտում
հերոսները. սնունդը՝ որպես ծեսի բաղադրիչ **143**

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԳ

«ՀԱՅՆ ՈՒ ԳԻՆԻՆ, ՏԵՐ ԿԵՆԴԱՆԻՆ»
ԲԱՆԱԶԵՎԻՑ ՄԻՆՉԵՎ
«ՀԱԲԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» **169**

Ա. Աստծո Մարմնի ու Արյան ճաշակումը **171**

Բ. Բանաձևը՝ որպես երդում **178**

Գ. Բանաձևը՝ աղոթք **185**

Դ. Տոհմական խոսքի
հեղինակն ու հիշեցնողը **190**

Ե. Փրկչի սպասում **196**

ԵՎ ՈՒՐԵՄՆ **201**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ **204**

SUMMARY **214**

PEZIOME **219**

*Նվիրվում է «Սասնա ծռեր» էպոսի հայտնության
Գարեգին Սրվանձությանցի
«Գրոց և բրոց. Սասունցի Գավիթ կամ Մերի դուռ»
գրքի հրատարակության 150-ամյակին*

ԻՖԻԵՎ ՄԿԻՉԻ

«Սասնա ծռեր» ազգային դյուցազներգությունը կամ հերոսական էպոսն առաջին անգամ արձանագրվել է միայն 19-րդ դարի վերջին քառորդում: Մինչ այդ հայ և օտար տարբեր աղբյուրներում (ասուրա-բաբելական սեպագիր ժամանակագրություններ, Աստվածաշունչ, Մովսես Խորենացի՝ «Հայոց Պատմություն», Թովմա Արծրունի՝ «Պատմության Արծրունյաց տան», Շարաֆ Խան Բիթլիսի՝ «Շարաֆ-Նամե», պորտուգալացի ճանապարհորդների նոթեր և այլուր) առանձին հիշատակություններ կան էպոսի հերոսների հնարավոր նախատիպերի, նրանց հետ կապված վայրերի մասին, սակայն մինչ օրս չեն հայտնաբերվել էպոսի մասին պահպանված ընդգրկուն տեղեկություններ:

Հայ էպոսագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ «Սասնա ծռեր» էպոսի ու հայ միջնադարյան գրականության ճանապարհները տարբեր պատճառներով չեն հատվել, իսկ արձանագրված ընդհանրություններն ու կապերն էլ կամ պատահական բնույթ ունեն կամ այլ աղբյուրներից են գալիս:

Բավարարվելով միայն էպոսի և գրավոր տեքստերի ուղղակի կապերի ուսումնասիրությամբ, կամ էպոսում առկա պատմական փաստերի վերհանմամբ՝ քիչ է կատարվել էպոսի ու հայ միջնադարյան արձակ ու չափածո, գեղարվեստական և ոչ գեղարվեստական երկերի մոտիվների ու արտահայտչամիջոցների բանագիտական-գրա-

կանագիտական համեմատական քննություն, ինչը հնարավորություն կտար տեսնելու գրավոր ու բանավոր ավանդված տեքստերի ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի կապերը: Մյուս կողմից կարևոր է ոչ միայն էպոսի՝ գրավոր տեքստերի վրա ունեցած հնարավոր ազդեցության, կամ որոշակի հետքերի, այլև գրական-ստեղծագործությունների՝ էպոսում ունեցած արձագանքի ուսումնասիրությունը:

Հայ միջնադարյան գրականության աշխարհը մի բարդ ու բազմազան համակարգ է, որտեղ արտացոլված հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի տարբեր իրողությունները, աշխարհայացքային առանձնահատկությունները, իրացված թեմաներն ու գաղափարները մի կողմից, մյուս կողմից հենց արտացոլման կերպը՝ պատումի ձևը, կերպարակերտման սկզբունքները, գեղարվեստական արտահայտության միջոցները որոշակի ընդհանրություններ են դրսևորում «Սասնա ծռեր» էպոսի գեղարվեստական աշխարհի հետ:

Իհարկե, բանավոր ու գրքային գեղարվեստական ավանդույթների հարաբերությունը բավական ընդգրկուն ուսումնասիրության նյութ է, ինչը պայմանավորված է առաջին հերթին այդ նյութի հսկայական ծավալներով: Ըստ այդմ էլ՝ մեկ ուսումնասիրությամբ հնարավոր չէ վերհանել գրականության ու էպոսի կերպավորման ընդհանուր բոլոր միջոցները, սակայն կարելի է մատնանշել ուսումնասիրության մեթոդները և առանձնացնել որոշ առանցքային մոտիվներ, որոնք հնարավորություն կտան գրական ու բանավոր ավանդույթները քննել զուգահեռ, բացահայտել միջնադարյան կյանքի ու կենցաղի ուշագրավ մանրամասներ ու դրանց գեղարվեստական արտացոլման առանձնահատկություններ:

Այս մենագրության մեջ մեր առանձնացրած ընդհանուր մոտիվների ու գեղարվեստական տարրերի քննու-

թյունը ճանապարհ է բացում, թե՛ Էպոսի և թե՛ միջնադարյան գրականության ու մշակույթի նոր ուսումնասիրությունների համար: Ի թիվս բանավոր ու գրքային ավանդույթների այլ ընդհանուր մոտիվների, մենագրության մեջ մեր ուշադրությունը կենտրոնացրել ենք ոչ միայն բանագիտական ու գրականագիտական, այլև մշակութաբանական վերլուծության հնարավորություն տվող մի շարք մոտիվների վրա, որոնք կապված են հասարակ ժողովրդի ու ազնվականության կենցաղի, որսորդության, սննդային սովորությունների, դրանց հետ կապված ծիսական ու գաղափարական բազմաբնույթ երևույթների հետ:

Մասնավորապես ուսումնասիրության առաջին մասում անդրադառնում ենք որսորդությանը: Որսորդությունը մարդու հնագույն տնտեսական գրադմունքներից է: Որսը սնունդ հայթայթելու միջոց է, ցեղի անդամների գործունեությունը, մրցակցային ոգին ապահովող գործոն, ժամանց և այլն: Նախնադարյան հասարակարգում որսորդության կարևոր դերի մասին վկայում են հնագիտական պեղումները, կրոնների պատմության ու ազգագրության բազմազան տվյալները, տարբեր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ պահպանված նմուշները: Որսորդության թեմատիկան և համապատասխան մոտիվները ի սկզբանե սերտորեն կապված են վայրի բնության ու կենդանական աշխարհի հովանավոր աստվածությունների պաշտամունքի հետ: Հանդես են գալիս ինչպես առանձին ժանրերով՝ որսորդական Էպոս, որսորդական առասպելներ, լեգենդներ, գրույցներ, բալլադներ, հմայական աղոթքներ, այնպես էլ՝ ավելի ուշ շրջանում առանձին մոտիվներով իրացվում բանահյուսական տարբեր ստեղծագործություններում՝ Էպոս կամ դյուցազներգություն, հրաշապատում և կենդանական հեքիաթ, ավանդական տարբեր գրույցներ, երգեր և այլն:

Որսորդական առասպելաբանության զարգացման առանձնահատկությունները և ծավալները կապված են

տվյալ ժողովրդի գոյության աշխարհագրական և բնակլիմայական պայմանների, սննդակարգի, կենցաղի ու սովորույթների հետ: Հատկապես լեռնային ու անտառային գոտիներում ապրող ժողովուրդների բանավոր մշակույթում ու գրականության մեջ մեծ տեղ են գրավում կենդանիների և անտառի տիրակալի կամ տիրուհու, վերջիններիս կողմից հովանավորվող կամ պատժվող որսորդների, ազնվականների որսորդության շուրջ հյուսվող առասպելները, գրույցներն ու պատմությունները:

Հայկական «Սասնա ծռեր» էպոսում, ինչպես նաև միջնադարյան գրական երկերում որսորդության մոտիվները կարևոր գործառույթներ ունեն: Դրանք հանդես են գալիս հարակից այլ մոտիվների՝ որսատեղիի հիմնում, արգելված որս, ազնվականների մրցակցություն, դավադիր սպանություններ, աստվածային պատիժներ, սննդի հայթայթում, մսի բաժանում, հացկերույթների և այլնի հետ, իրացվում մեծ հանախականությամբ: Գրական ու բանահյուսական ստեղծագործություններում որսորդության գեղարվեստական արտացոլման ուսումնասիրությունը ճանապարհ է բացում հարակից այլ երևույթների, մասնավորապես, ուտեստների ու ըմպելիքների, հացկերույթների ու խնջույքների, դրանց ծիսական, գեղարվեստական ու գաղափարական գործառույթների ու նշանակության ուսումնասիրությունների համար:

Հինավուրց ծեսերում, առասպելներում, էպոսներում, ապա նաև գրավոր մշակույթում արտացոլվել են ուտելիքի, հացկերույթի ու սննդի նշանակության հետ կապված տարբեր պատկերացումներ ու մոտիվներ: Բանահյուսության մեջ ու հին գրականություններում դրանք դիտարկելի են նախ որպես հանրույթի կենցաղի, սննդային սովորույթներին ազգագրական փաստեր և ծիսաառասպելական հնագույն արմատներ ունեցող երևույթներ, ապա նաև բանահյուսական-գրական մոտիվներ:

Ազգագրության մեջ այս հարցերը քննարկվել և

քննարկվում են առաջին հերթին հանրույթի կենցաղային մշակույթի համատեքստում, այլ տարրերի՝ բնակության պայմանների, սննդի միջոցների հայթայթման, կյանքի կազմակերպման և կենցաղի այլ բաղադրիչների հետ միասին: Այս մոտիվները սահմանվում են որպես կենսաապահովության մշակույթի տարրեր, և հաշվի են առնվում դրանց համադրական էությունն ու բազմազան դրսևորումները: Թեև ժողովրդի կենսաապահովության մշակույթի բաղադրատարրերը վերաբերում են նյութական մշակույթի ոլորտին, սակայն դրանք արտացոլում են հոգևոր-մշակութային բազմազան դրսևորումներ՝ սոցիոնորմատիվային, ծիսապաշտամունքային, գեղագիտական և այլն. «Ցանկացած ժողովրդի կենսաապահովման համակարգերի համալիրում առանցքային տեղերից մեկը պատկանում է սննդին, որը մարդու առաջին, հիմնական և ամենօրյա կենսական կարիքն է: Ժողովուրդների էթնիկ և մշակութային-պատմական ինքնատիպությունն ուղղակի կամ անուղղակի արտացոլվել է նրանց հատուկ սննդամթերքի տեսականու, դրանց վերամշակման եղանակների մեջ, ուտեստների տիպերի, սննդային նախապատվությունների կամ խուսափելու ավանդույթներում, ճաշի ծեսի կազմակերպման և մշակույթի այլ դրսևորումներում և այդ երևույթների ուսումնասիրությունը մշակութաբանական մեծ հետաքրքրություն է ներկայացնում»¹:

Բանագիտական-գրականագիտական տեսանկյունից սննդի, հացկերույթների, հարակից այլ երևույթների, օրինակ, որսորդության հիշատակությունները, իմաստային

¹ *Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования* (на материалах армянской сельской культуры) /отв. ред. С. Арутюнов, Э. Маркарян/, Ереван, 1983, с. 189 (Հայկական սննդային համակարգի մասին՝ էջ 189-254): Մննդային նախասիրությունների ազգագրական առանձնահատկությունների մասին տե՛ս նաև **Н. Григулевич**, *Этническая экология питания: Традиционная пища русских старожилос и народов Закавказья*, Москва, 1996, с. 116-122:

մեծ ծանրաբեռնվածություն ու գեղարվեստական գործառույթներ ունեցող մոտիվներ կարող ենք համարել: Դրանք էպիկական ստեղծագործությունների դիպաշարի զարգացման իրան են կամ կարևոր հանգույցներ, որոնք ստեղծում են յուրահատուկ մթնոլորտ, տիպականացնում հերոսների գործողությունների միջավայրը, երբեմն պատմականորեն կոնկրետացնում դրանք, բնութագրում կերպարներին ու հանրույթները, մեկնաբանում անհատի ու միջավայրի վարքն ու հոգեբանությունը, արտացոլում հասարակական կառուցվածքն ու այլ հարաբերություններ: Այս տեսանկյունից կարևոր է առանձնացնել ոչ միայն այն, թե ինչ են ուտում բանահյուսական ու գրական ստեղծագործությունների հերոսները, կամ ինչպես են պատրաստում ուտելիքը, կամ որքանով են այս երևույթները համապատասխանում, օրինակ, էպոսի ստեղծման ու կենցաղավարության ազգագրական միջավայրին, այլև՝ թե տարբեր ստեղծագործություններում ի՞նչ նշանակություն ու գործառույթներ ունեն ուտելիքների ու հացկերույթների նկարագրությունները, սննդի հայթայթման ու որսորդության մոտիվները:

Հանրույթի սննդային նախապատվությունների, կենցաղի ու սովորույթների ուսումնասիրությունը նախկինում դիտարկվել է առավելապես որպես մշակութաբանական-ազգագրական խնդիր, իսկ այսօր հնարավորություն կա քննելու դրանք նաև բանագիտական-գրականագիտական տեսանկյունից: Մասնավորապես սննդային կողերի ուսումնասիրություններն իրականացվել ու իրականացվում են մարդաբանական, նշանագիտական, լեզվաբանական հետազոտությունների շրջանակում: Այստեղ սննդային կամ խոհարարական կոչվող կողերը մշակութային այլ կողերի հետ միասին ընկալվում ու մեկ-

նաբանվում են որպես հանրույթի ինքնությունը, աշխարհի հետ հարաբերությունները երևակող կարևոր ցուցիչներ, մարդկանց բնութագրող լեզվական-նշանային միավորներ:

Մենդային կողերը հատկապես հնագույն տեքստերում՝ Աստվածաշնչում, առասպելներում, էպոսում սերտորեն կապված են ծեսերի հետ: Դրանք կարևոր նշանակություն ունեն հին հայկական հեթանոսական ծեսերում, ինչի արձագանքը գտնում ենք «Մասնա ծռեր» էպոսում: Մենդային կողերը առանցքային են նաև Աստվածաշնչում: Ի մասնավորի Նոր կտակարանում Հիսուս Քրիստոսի հետ հավատացյալների հաղորդակցման գլխավոր ճանապարհի՝ Սուրբ Պատարագի հիմքում Փրկչի կողմից Խորհրդավոր ընթրիքի ժամանակ սահմանված՝ հացի և գինու ճաշակմամբ Սուրբ Հաղորդության խորհրդն է: Հացն ու գինին էլ խորհրդաբանորեն ներկայացնում են Աստծո Մարմինն ու Արյունը: Մեր ուսումնասիրության չորրորդ մասում հայ միջնադարյան գրականության, մասնավորապես Ներսես Ծնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքի հետ զուգահեռ քննությամբ վերլուծում-մեկնաբանում ենք «Մասնա ծռեր» էպոսի հերոսների «Հացն ու Գինին, Տեր Կենդանին» աղոթք-երդումը և բանավոր ավանդման ընթացքում դրա կրած ուշագրավ փոփոխությունները:

Մեթոդաբանություն: Միջնադարյան գրականության և բանավոր ավանդույթի ժամանակակից համեմատական ուսումնասիրություններում տարածված է կառուցվածքային-նշանագիտական մեթոդի սահմաններում իրականացվող մոտիվային հետազոտությունը: Մենք ևս էպոսի բանավոր տարբերակների ուսումնասիրության դեպքում յայնորեն կիրառել ենք այդ մեթոդն ու համապա-

տասխան միավորները²: Պատկերավորման այդ միջոցները, որոնք բնութագրվում են ձևաբովանդակային որոշակի ավարտունությամբ և կրկնությամբ, բանագիտական ու գրականագիտական արդի ուսումնասիրություններում կոչվում են հիպերմոտիվներ, մոտիվներ, երբեմն՝ միջադեպեր:

Մոտիվ ասելով՝ հասկանում ենք բովանդակային տեսանկյունից թեմային ստորադասվող, բնագրային որոշակի իրականություններից վերացարկված բովանդակակառուցվածքային միավորներ, որոնք որոշակիանում են առանձին բնագրերում մոտիվային իրենց տարբերակների իրացումներով:

Մոտիվներն ամբողջացնող հանգույցները դառնում են հիմնականում հերոսների գործողությունները, որոշ դեպքերում նաև կրկնվող ընդհանուր նկարագրությունները: Մոտիվներն առանձնացնելիս մենք հաշվի ենք առել միավորի կրկնվելու և բնագրային որևէ բովանդակային ամբողջություն ընդգրկելու հատկանիշը: Մենք առանձնացնում ենք նաև մոտիվների խմբեր (մոտիվաշարեր) ընդգրկող հիպերմոտիվներ³:

Հիպերմոտիվները հիմնական տեքստակառուցողական, դիպաշարաստեղծ հնարանքներ են, որոնք որոշ փոփոխություններով (մոտիվային կազմ, մոտիվների հաջորդականություն, իրացման ծավալ) հիմնականում կրկնվում են պատումից պատում և մասից մաս: Որոշ դեպքերում պատումների տիպաբանական խմբերը

² Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Համբարձումյան, *Պատում, մոտիվ, գրքային ակնհորույթ*, Երևան, 2018, էջ 80-190:

³ В. Тюпа, “Словарь мотивов как научная проблема (на материале пушкинского творчества)”, *Словарь-указатель сюжетов и мотивов русской литературы*, вып. 1, 2-е издание, Новосибирск, 2006, с. 172.

դրսևորում են յուրահատկություններ. այս կամ այն հիպերմոտիվը կամ իրացվում է փոքրաթիվ մոտիվներով ու ծավալով, կամ ընդհանրապես բացակայում է տվյալ խմբում, փոխարենը իրացվում է այլ հիպերմոտիվ: Այս սկզբունքներով մենք «Մասնա ծռեր» էպոսի պատումների յուրաքանչյուր խմբում առանձնացրել ենք այդպիսի 33-37 հիպերմոտիվ, որոնք իրացվում են առանձին մոտիվաշարերով: Կրկնվող հիպերմոտիվներ են օրինակ, հերոսների երագները, ազգականների օգնությունը հերոսներին, խորհրդատու հերոսների առկայությունը, մշակութային գործունեությունը, որսորդությունը, հացկերույթներն ու խնջույքները, կռիվ-մենամարտը, գորահավաքը, հերոսի ուժի ցուցադրությունը, հրաշալի ծնունդը, մանկական չարությունները, երդումն ու երդմնազանցությունը, սննդի հայթայթումը և այլն: Ըստ այդմ էլ՝ թերևս հենց դրանք են կազմում էպոսի մոտիվային հիմնական բազան ու սխեման, ապա իրացվում ավելի մասնավոր մոտիվային տարբերակներով, ստանում նոր զարգացումներ:

Մոտիվային քննությունը լայնորեն կիրառվում է հին ու միջնադարյան գրականության տարբեր ժանրերի ուսումնասիրությունների դեպքում, ինչը լավ հնարավորություններ է բացում գրական ու բանավոր ավանդույթները կողք կողքի բազմազան փոխազդեցությունների մեջ քննելու, այս կամ այն մոտիվի տարժամանակյա կիրառությունները արձանագրելու համար:

Մոտիվային տեսությունը օգտագործվում է նաև ժամանակակից պատմագիտության մեջ՝ իշխանության ձևերի, զինվորական գաղափարախոսության, ասպետական վարքականոնի ուսումնասիրության ժամանակ: Հատկապես ուսումնասիրվում և վերականգնվում են սոցիալական տարբեր արարողություններն ու ծեսերը՝ վասալական հարաբերություններ, զոհաբերություններ,

հարկահանություն, իշխանության խորհրդանշայնացման այլ պարագաներ ու հանգամանքներ⁴: Սրանք տիպական, պարբերաբար կրկնվող երևույթներ են, այսինքն կարող են մոտիվներ համարվել:

Մեթոդական նույն սկզբունքներով կատարվում են այլ բնագրերի՝ տարեգրությունների, վարքերի դիպաշարային սխեմաների, էպիկական ու պատմական պատումների համեմատական ուսումնասիրություններ: Առանձնացվում են ընդհանուր գծեր (մոտիվներ)՝ մենամարտ, ընտրյալ հերոսի փնտրտուքներ, հերոսի արտաքին տեսքի ու իրական բնավորության անհամապատասխանություն, քաղաքի ազատագրում կամ գրավում խորամանկությամբ, դավադրությամբ, դավաճանությամբ, էպիկական թվերի կիրառություն և այլն⁵:

Այսինքն՝ անկախ ծագումից՝ բանավոր ավանդույթ, թե գրական, բնագրերը դիտարկվում են որպես պատում (narrative), որոնք ստեղծվում են նմանտիպ սկզբունքներով, օգտագործելով արդեն եղած, հասարակական կյանքի տարբեր հարաբերություններ արտացոլող կադապրներ, լեզվական-գեղարվեստական միավորներ կամ պատկերավորման միջոցներ: Այսինքն՝ այլևս խիստ հակադրության մեջ չեն դիտվում բանավորն ու գրականը, ինչպես գրականության ու բանահյուսության ուսումնասիրության ավանդական մեթոդների դեպքում էր, որովհետև իրականում միջնադարյան բնագրերի դեպքում շատ դժվար է գտնել բանավորի ու գրականի սահմանը, տարրոշել փոխազդեցությունների բնույթն ու ուղղությունը:

⁴ **Ж. Ле Гофф**, *Другое Средневековье. Время, труд и культура Запада*, Екатеринбург, 2000. **М. Мосс** Социальные функции священного, Санкт-Петербург, 2000.

⁵ **Н. Трубцкой**, *Лекции по древнерусской литературе. История. Культура. Язык*, Москва, 1995. **В. Ключевский**, *Древнерусские жития святых как исторический источник*, Москва, 1989.

«Հացն ու Գինին...» մենագրության մեջ որսորդության, սննդի, դրանց առնչվող ծեսերի ու մոտիվների համեմատական քննությամբ բացահայտվում են ինչպես գրավորի ու բանավորի հարաբերության գրականագիտական-բանագիտական խնդիրներ, այնպես էլ ներկայացվում են սննդի առօրյա ու ծիսական կիրառության ու նշանակության, սննդային մշակության կողերի խորհրդարանության ու գաղափարական ծանրաբեռնվածության հարցեր: Նաև ներկայացվում են ժողովրդական կյանքի ու կենցաղի, ազնվական վարք ու բարքի, զբաղմունքների, եկեղեցական օրացույցի առանձնահատկություններ: Անդրադարձ է կատարվում էպոսում և հայ միջնադարյան գրականության մեջ հիշատակվող ուտեստների ու դրանց պատկերավորման առանձնահատկություններին ու գեղարվեստական-գաղափարական նշանակությանը:

Ուսումնասիրությունը կատարվել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում իրականացվող «Կերպավորման միջոցները հայ միջնադարյան գրականության մեջ և «Սասնա ծռեր» էպոսում» գիտական թեմայի շրջանակում: Գրքի սննդային կողերին և հերոսների ճաշացանկին նվիրված հատվածի հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհով:

Գիրքը կազմող առանձին հատվածներ հոդվածների ու ակնարկների տեսքով հրատարակվել են գիտական մամուլում և համացանցում, ընթերցվել գիտական նստաշրջանների ժամանակ:

HAYK HAMBARDZUMYAN

**BREAD AND WINE:
HUNTING, FEAST AND CULINARY CODES IN
THE EPIC “DAREDEVILS OF SASSOUN” AND IN
MEDIEVAL ARMENIAN LITERATURE**

SUMMARY

The monograph with a comparative analysis of Armenian medieval literature and the epic *Sasna Tsr'er/Sassounts'i Davit' (Daredevils of Sassoun, David of Sassoun)* presents the forms of food acquisition of epic and literary heroes, features of hunting, food preferences, the manner and time of consumption of the mentioned products. Attention is paid to the domestic, ritual, and artistic significance and functions of dishes, as well as food codes.

The food or culinary cultural codes refer to the set of symbols, traditions, and practices associated with food within a particular culture. These codes encompass cooking techniques, ingredient choices, meal rituals, and the social significance of food in a given community. Exploring culinary cultural codes provides insights into the traditions and values embedded in a society's culinary practices.

In particular, in the first part of the study, we discuss hunting. Hunting is one of the oldest economic activities of humanity. Hunting, serving as a means of sustenance procurement, a communal activity among tribe members, and a catalyst for fostering a competitive spirit and entertainment, emerges as a multifaceted phenomenon.

In the Armenian epic *Sasna Tsr'er* and in the medieval historiography the motif of hunting is realized. In particular, in the variants of the epic and in the works of medieval authors P'awstos Buzand, Movsēs Khorenats'i, Movsēs Kagkankatuats'i, Step'anos Orbelean, there are motifs of creating hunting places, liberating or finding a hunting mountain or forest, feast and food, finding in the same place a church hidden from the heroes, murder during hunting, etc.

The comparative examination of analogous motifs across oral and literary traditions unveils interconnections, mutual influences, and the pivotal functional and plot shaping roles of hunting motifs. These motifs, within thematic and ideological frameworks symbolize liberation from foreign oppression and the consolidation of regal authority. Feast and food imagery in the epic, intertwined with hunting, emerges as a vital aspect reflecting ancient rituals, mythologies, and literary expressions.

The images of feast, and food too are partly related to hunting. In ancient rituals, myths, epics, in literature, different ideas and motifs associated with the meaning of food and meals are reflected. These representations of meal cultural codes can be seen in the Armenian epic *Sasna Tsr'er* in the descriptions of the characters and their environment, in the regions of creation and distribution of the epic.

In medieval Armenian literature, for various reasons, there is scant information concerning food and meals, but there are motifs of feasts and hunting, descriptions of the life of kings and nobles, where one can find references to food. We can also get information about culinary preferences and nutrition of ancient Armenians from old translated texts, medieval Armenian fables, medical texts and poetry of the late period.

The menu of the heroes of the epic includes bread, mainly millet, meat, vegetables, dairy products, and various dessert dishes. The use of food shows the national identity of the heroes, their social status, points to some ancient ritual realities.

In medieval Armenian literature, heroes eat Barbecue, Harissa, fish, fruits, vegetables, etc. Unlike the epic, food in literature has no important semantic meanings and functions. Most often, it is presented as a phenomenon that emphasizes the social status of the heroes and as an attribute of royal life.

The food motifs of the epic, being artistic motifs or codes of everyday life and ethnographic reality, have their roots associated with ancient rituals and various ideas. This is evidenced by the amount and method of food consumption by the heroes of the epic, the place and time of the implementation of these motifs in the plot of the epic. In particular, the motifs of gluttony, being an exaggeration, can be considered as an explanation and justification for the huge physical size and enormous strength of the heroes, but they are also associated with trials, initiation, rites and the popular idea of the leader of the country. Along with the rites of passage, the ways of eating indicates the contrasts between the wild and civilized world, childhood and maturity, child and warrior, friend or foe.

So, in the episodes of Sanasar and Baghdasar eating raw and unsalted meat in the first branch of the epic, we see the contrast between nature and culture, and in the episode with Harissa and demons kidnapping calves common in the third branch, we see a contrast between friend and foe, as well as the possible connection of this episode with the «Յուսման խաչ» (“Cross of Wrath” and with the cult of Vishapak‘ar (Dragonstones).

The food codes of the epic also reveal many connections with the semantic complex of sacrifice-death-rebirth and rites of passage. In the epic, Harissa is made from sacrificial meat and is viewed as a sacrifice. In another episode, Davit’ or Mher divide hunting meat into 7 pieces, like matagh – sacrificial meat. The heroes of the epic make plentiful sacrifices before the battle with the enemy in order to gain strength and protection, as well as during the chrismation of the king.

The main motif for the first encounter with the world of the central characters of the epic, the manifestation of strength, and the first test is the lack of food and the punishment of the guilty. Mher kills a lion, who blocks the way of bread, Davit' returns the skins of the stolen calves. Through these actions, the heroes turn from children into warriors. They show their purpose – to be protectors and kings, guarantors of public welfare.

Connected with the ancient ritual and Christian sacrament of partaking of the Body and Blood of God is the prayer of the heroes of the epic - “Bread and wine, the living Lord”.

The phrase “Bread and wine, the Living Lord” serves a dual purpose in the different versions of the epic: as an oath and as a prayer. In the former case, we believe it can be interpreted in connection with the Old Testament. As a prayer, this formula reveals connections with written and oral prayers that have been widely spread among the people and augmented with new saints and characters.

One version of the epic mentions a verse called the “Prayer of Nerses,” which is an expanded version of the well-known phrase “Bread and wine, the living Lord” that grants strength to the epic's heroes. In various other variants, the heroes always recall the prayer of Saint Nerses the Gracious, saying “I Confess with Faith,” before significant events.

The mention of the works of Nerses the Gracious and the combination with the empowering guardian formula in the epic, can be attributed to several circumstances. This prayer also holds an important function in emphasizing the preservation of religious identity within an environment dominated by other religions.

Due to the fame and popularity of Saint Nerses the Gracious and his prayer “I Confess with Faith,” this prayer wielded significant influence and had a reputable status among the general populace, and was known as “Nerses's prayer.” The epic narrators believe that the author of their

ancestral prayer too is Father Nerses or that their prayer is somehow connected to him. The fact that the prayer of St. Nerses, “I Confess with Faith” mostly precedes the Psalms of Davit’ in prayer books, psalm collections, and similar published works since the 17th century likely contributes to this phenomenon. However, there might be some confusion arising from the thematic commonality and the similarity of character names.

Finally, there are ideological commonalities. Davit’ of Sassoun, his son Pok’r Mher, are perceived as long-awaited saviors, God’s chosen kings in the later collective cultural consciousness, and similar expectations and ideas are found in the works of Nerses Gracious. In addition, both in the Armenian epic and in St. Nerses’s work, the ideas of faith, tribal or national dignity, and finally identity preservation is utmost importance.

Summarizing the above, it can be noted that epic poems and medieval literature often contain culinary codes that provide insights into cultural values, social structures, and daily life. In monograph we analyzed some aspects of this issue.

The Epic poems elaborate the different feasts. The certain foods have symbolic meanings within the epic narrative. The particular dishes represent the cultural identity, also a rituals or ceremonies, include the preparation of special meals for important events or characters.

The eating habits, preferences, or avoidance of central heroes certain foods is reveal aspects of their character or cultural norms.

The food motifs also are used as a narrative device. It serve as a catalyst for some events, and is the symbol of hospitality or betray.

АЙК АМБАРЦУМЯН

**ХЛЕБ И ВИНО:
ОХОТА, ПИР И КУЛИНАРНЫЕ КОДЫ В
ЭПОСЕ «САСНА ЦРЕР» И В АРМЯНСКОЙ
СРЕДНЕВЕКОВОЙ ЛИТЕРАТУРЕ**

РЕЗЮМЕ

В монографии со сравнительным анализом армянской средневековой литературы и эпической поэмы «Сасна црер» («Сасунские удалцы») представлены способы добывания пищи эпических и литературных героев, особенности охоты, пищевые предпочтения, способ и время потребления продуктов. Большое внимание уделено бытовому, ритуальному и художественному значению и функциям блюд, а также кодам еды.

Коды еды, или кулинарные культурные коды представляют набор символов, традиций и практик, связанных с едой в рамках определенной культуры. Эти коды охватывают методы приготовления пищи, выбор ингредиентов, ритуалы приема пищи и социальную значимость еды в данном сообществе. Изучение кулинарных культурных кодов дает представление о традициях и ценностях, заложенных в кулинарные практики общества.

В частности в первой главе книги мы представляем мотив охоты. В Армянском эпосе «Сасна Црер» и в средневековой историографии разными мотивами реализуется гипермотив охоты. В частности, в вариантах эпоса и в книгах средневековых авторов, Фавстоса Бузанда, Мовсеса Хоренаци, Мовсеса Каганкатваци и Степаноса Орбеяна, встречаются мотивы создания мест охоты, освобождения или нахождения охотничьей горы или леса, нахождения в том же месте спрятанной от героев церкви, убийства во время охоты и т. д.

Сопоставление схожих мотивов в устной и книжной традиции не только дает возможность отследить связь и взаимовлияния традиций, но также показывает важное функциональное и сюжетообразующее значение мотивов охоты. В тематико-идейном плане создание или нахождение места охоты символизирует освобождение от чужеземного ига и укрепление царской власти.

В древних обрядах, мифах, эпосах, затем в письменной культуре нашли отражение также разные представления и мотивы, связанные со значением пищи, еды и трапез. Эти представления кулинарных кодов можно увидеть в армянском эпосе «Сасна Црер» в описаниях персонажей и их окружения, в регионах создания и распространения эпоса.

В средневековой армянской литературе по разным причинам немного сведений о еде и о трапезах, но есть мотивы пиров и охоты, описания быта царей и князей, где можно найти упоминания о еде. О кулинарных предпочтениях и питании древних армян мы можем так же узнать из древних переводных текстов, из средневековых армянских басен, медицинских текстов и поэзии позднего периода. Особенно в последних еда, процессы приема пищи, значение еды для здоровья и удовольствия представлены довольно подробно.

В меню героев эпоса входят хлеб, преимущественно пшеничный, мясные, овощные, молочные и различные десертные блюда. Использование еды указывает на национальную принадлежность героев, их социальный статус, и на некоторые древние обрядовые реалии. В средневековой армянской литературе герои едят шашлык, харису, рыбу, фрукты, овощи и т.д. В отличие от эпоса, пища в литературе не имеет большой смысловой нагрузки и функции. Чаще всего оно представлено как явление, подчеркивающее социальный статус героев и как атрибут царской жизни.

Пищевые мотивы эпоса, в качестве художественных мотивов или кодов бытовой этнографической действительности, своими корнями уходят в древние обряды и представления. Об этом свидетельствуют количество и способ потребления пищи героями эпоса, место и время реализации этих мотивов в сюжете. В частности, мотивы обжорства могут рассматриваться как объяснение-оправдание крупного телосложения и огромной силы героев, но также связаны с испытаниями, обрядами посвящения и народным представлением о царе. Наряду с обрядами перехода способы приема пищи указывают на противопоставления дикий-цивилизованный, детство-зрелость, ребенок-воин, свой-чужой. Так, в эпизодах поедания Санасаром и Багдасаром сырого и несоленого мяса в первой ветви эпоса, мы видим противопоставление дикий-цивилизованный, а в эпизоде с харисой и демонами, похищающими телят, распространенном в третьей ветви, мы можем наблюдать контраст между своими и чужими, а также возможную связь этого эпизода с «Крестом гнева» (Цасман Хач) и с культом Вишапакаров.

Кулинарные коды эпоса также обнаруживают множество связей со смысловым комплексом жертвоприношение-смерть-возрождение и с обрядами перехода. В эпосе хариса готовится из жертвенного мяса. В другом эпизоде Давид или Мгер делят охотничью добычу на 7 частей, наподобие жертвенному мясу (матах). Герои эпоса приносят обильные жертвоприношения перед битвой с врагом, чтобы обрести силу и защиту, а также во время миропомазания.

Главной мотивацией первого столкновения с миром главных героев эпоса, проявления силы и первого испытания является отсутствие еды и наказание виновных. Мгер убивает льва, преграждающего путь доставки хлеба, Давид возвращает шкуры украденных телят. Благодаря этим действиям герой превращается из ребенка в воина и обнаруживает свое предназначение – быть царем и защитником, гарантом общественного благосостояния.

С древними обрядами, так же христианским таинством вкушения Тела и Крови Божией связана молитва героев эпоса - “Хлеб и вино, жив Господь”. В одной из версий эпоса упоминается отрывок под названием “Молитва Нерсеса”, представляющий собой расширенное изложение известной формулы “Хлеб и вино, жив Господь”, дарующей силы героям эпоса. В других вариантах герои всегда вспоминают молитву святого Нерсеса Шнорали, произнося «С верой исповедую», перед важными событиями.

Формула “Хлеб и вино, жив Господь” в разных версиях эпоса имеет разное значения- клятвы и молитвы. Мы полагаем, что в первом случае его можно интерпретировать в связи с Ветхим Заветом, так как фраза “Жив Господь” распространенная клятва в Библии. Как молитва эта формула обнаруживает связи с письменными и устными молитвами, получившими широкое распространение в народе.

Упоминание молитвы Нерсеса Шнорали и сочетание с эпической формулой оберега, придающего силы героям, могут быть обусловлены несколькими обстоятельствами. Сходная по жанру и функциям, она является защитной молитвой, а также заявлением о вере и декларацией религиозной идентичности. Подобно молитве Шнорали, эта магическая формула является прежде всего Символом веры, имеющим еще одну важную функцию – подчеркивание религиозной идентичности в среде неверующих.

Молитва святого Нерсеса Шнорали имела большое влияние в народной среде и была известна как “Молитва Нерсеса”. Сказители эпоса считают, что автором их родовой молитвы также является отец Нерсес, или что их молитва связана с этой молитвой. Этому явлению, скорее всего, способствовало и то, что в молитвенниках, и других подобных сборниках, издаваемых с 17-ого века, молитва св. Нерсеса “С верой исповедую” по большей части

предшествует псалмам Давида. В этом случае также возможна некоторая путаница из-за тематической общности и тождества имён персонажей.

И, наконец, есть идеологическая общность. Давид Са-сунский, его сын Мгер Младший в позднейшем коллективном культурном сознании воспринимаются как долгожданные спасители, богоизбранные цари, и подобные ожидания и идеи реализуются в произведениях Нерсеса Шнорали. Кроме того, и в эпосе, и в творчестве Шнорали первостепенное значение имеют идеи веры, родового или национального достоинства, наконец, сохранения идентичности.

Подводя итоги вышесказанному, можно отметить, что эпические поэмы и средневековая литература часто содержат кулинарные коды, которые дают представление о культурных ценностях, социальных структурах и о повседневной жизни. В монографии мы проанализировали некоторые аспекты этого вопроса.

Эпические поэмы и средневековая литература часто описывают различные праздники. Определенные продукты имеют символическое значение в эпическом повествовании. Конкретные блюда символизируют культурную самобытность, а также можно увидеть ритуалы или церемонии, включающие приготовление особых блюд для важных событий или персонажей.

Пищевые привычки, предпочтения или отказ от определенных продуктов главных героев раскрывают аспекты их характера или культурных норм.

Картины пиров и мотивы еды также используются как средство повествования. Они служат катализатором некоторых событий и являются символом гостеприимства или предательства.



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
www.matenadaran.am

